լով Նորան Խաֆանդիարին՝ ուղղակի գնաց Դարբանդ. Օտբայ իւր կողմից նշանակեց Սիմակ Ի. Խաբաշային կառավարիչ (երկրի մի մասի վերայ)։ Եւ այսպէս Օմար ամբողջ Ատրպատական յանձնեց Օտբայ Ի. Ֆարքադին։

Բահրամ Ի. Ֆառռուխզադ՝ դարան մտնելով՝ իւր զօրքով սպասեց Օտբային ճանապարհին, մինչեւ նա մօտեցաւ. տեղի ունեցած ճակատամարտում Օտբայ ի փախուստ դարձրեց Բահրամին, որ ապրեցաւ փախստեամբ։

Երբ Օտբայի ձեռքն անցաւ Բուկէյրի իշխանութիւնն եւս, նա գրեց Ատրպատականի բնակչաց հետեւեալ դաշնագիրը՝

"Ցանուն Աստուծոյ ամենագթասէրի եւ ամենաողորմածի. աւասիկ այս պայմանները շնորհեց Օտբայ Ի. Ֆարքադ՝ Օմար Ի. Խաթթաբի կառավարիչը՝ Ատրպատականի ժողովրդին՝ նորա դաշտերի, լեռների, արօտատեղերի եւ ստրուկների վերաբերմամբ, նաեւ կրօնաւորներին. բոլոր բնակչաց ապահովութիւն է տրուում՝ նոցա կեանքի, գոյքի, կրօնի եւ հաստատութեանց համար այն պայմանով, որ նոցանից ամէն մէկը գլխահարկ վճարէ ըստ չափոյ իւր կարողութեան, բաց ի երեխաներից, կանանցից եւ շքաւորներից, որոնք աշխարհական ինչք չունին, եւ բաց ի կրօնաւորներից, որոնք աշխարհական գոյքից զուրկ են։ Այս արտօնութիւնք կը շնորհուին թէ երկրի բնիկ ժողովրդին եւ թէ նորա հետ բնակողներին, որոնք պարտաւոր են գիշեր եւ ցերեկ հիւրընկալել մուսլիմ զօրագնդերից անջատուած զինուորին եւ նորան ուղեցոյցներ տալ։ Ով տարուայ ընթացքում իւր խաշինքը ժանտախտից կորցրեց, նա ազատ կը մնայ նոյն տարուայ հարկից։ Ով երկրի մէջ մնայ, նա կը վայելէ նոյն իրաւունքներն, որ եւ երկրի բնակիչքայսուհետեւ, իսկ ով հեռացաւ, նորան ապահովութիւն կը տրուի, մինչեւ նա իրեն ապաստան գտնի։ Թուղթս